

№ 2 ՓԵՏՐՈՒԱՐ 1887

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

№ 2

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎԵԱՆ, «Աղբիւրի» գրական ալբոմ։
Զմեռ . . . . . Սնաբ
Արեգնազան կամ Կախարդական աշխարհ (շարունակութիւն) . . . . . Ղ. Աղայեան
Մշակի քրտինքը (բանաստեղծութիւն) . . . . . Սրինգ
Հայրը և որդին (Ալֆոնս Դոդէից) թարգ. . . . Օր. Շ. Նիկողոսեան
Ոբբիկ (բանաստեղծութիւն) . . . . . Աղ. Ծատուրեան
Յովհաննէս Հուս (շարունակութիւն) . . . . . Փ. Վարդանեան

ԳԻՏՈՒԹԻՒՆ

Ընտանեական զրոյցներ, Բ. (Դիսանդէից) . . . . Խաչիկ

ՏԵՂԱԳՐԱԿԱՆ ՆԱՄԱԿԱՆԻ

Մնացորդներ, Է. . . . . Ն. Տէր-Աւետիքեանց

ՀԵՏԱՔՐՔԻՐ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Երկաթուղիական հանդէս։ Մարդու կեանքի ածէքը։ Թուղթ, որ վոխարինում է քարէ տախտակ։ Մի վունչ թարմ ծաղիկ։ Ամենավոքրիկ լրագիրը։ Աշխատաւոր կիներին թիւը Ամերիկայում։

ԱՅԼ ԵՒ ԱՅԼԻՔ

Ուսումնականութիւնը չինացիների մէջ։

ՋՈՒՍՐՃԱԼԻՔ

Հանելուկ։ Առաջարկութիւն։ Շուտասելուկ։ Թէ ինչպէս կարելի պատկերացնել։ Նախընթաց № -ի մէջ եղած առաջարկութեան, հանելուկի և ներուսի բացատրութիւնը։

ԵՐԿՐՈՐԴ ԲԱԺԻՆ

Կրթութիւն երևակայութեան . . . . . Ս. Բէկնազարեան
Կակազութեան բժշկութիւն (շար. և վերջ) . . . Ս. Մանդինեան
Մուրճն ու իր արճագանգը (առակ) . . . . . Ոչով

Խաւն լուրեր. Մի փոփոխութիւն. Մեր բաժանորդները. «Հանդէս Ամսօրեայ». «Լեզու»։ «Աղբիւր» նուիրողներ։ Խմբ. ստացած գրքեր։ Մեր սովորութիւնը։ Մի տարի Շվէյցարիայում։ Մի զեղեցիկ գրքոյկ։ Արութիւն եւ Մանուէլ։ Մեր շնորհակալութիւնը։ «Աղբիւրի» թղթակցութիւններ։ Յայտարարութիւններ։

ՄՇԱԿ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

ՆԵՐԿԱՅ **1887** ԹՈՒԻՆ

Կը հրատարակուի Թիֆլիզում, նոյն դիրքով և նոյն պրոգրամայով։ Մենք կը ստանանք սեպհական ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։

«ՄՇԱԿԻ» տարեկան գինը 10 ռուբլի է, վեց ամսուանը 6 ռուբլի։

Գրուել «ՄՇԱԿԻՆ» կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ (Բարօնսկայա և Բազարնայա փողոցների անկիւնում, Թամամշեվի տանը)։

Կայսերութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրուելու համար պէտք է դիմել հետևեալ հասցէով. ТИФЛИСЪ, Редакція газеты «МШАКЪ». իսկ արտասահմանից. Tiflis. Rédaction du journal arménien «MSCHAK»

Խմբագիր-հրատարակող՝ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

MAGASIN ILLUSTRÉ D'ÉDUCATION ET DE RÉCRÉATION

ET SEMAINE DES ENFANRS

(Journal de toute la famille).

RÉUNIS, PUBLIÉS PAR J. MACÉ—P. J. STAHL—J. VERNE.

Abonnements: Paris 14 fr. Départements 16 fr. Union postale 17 fr.. 22-e année. 2 numéros par mois le 1-er et le 15 chaque numéro: 60 cent. par la poste: 70 cent.

J. Hetzel et C-ie, éditeurs—18, rue Jacob. Paris.

MON JOURNAL

Cinquième année

Recueil mensuel pour les enfants de cinq à dix ans 12 numéros par an. France 1 fr. 80 cent; Etranger 2 fr. 50 cent. un numéro le 15 de chaque mois: 15 centimes

S'adresser à la librairie Hachette et C-ie, éditeurs 79 boulevard Saint Germain. Paris.

LE TOUR DU MODE

Nouveau journal de voyages, publié sous la direction de M. Edouard Charton et trés richemcnt illustré par nos plus célèbres artistes. Année 1887

Est illustré de 500 gravures sur bois

Et renferme 25 cartes ou plans. Prix de l'année 1886, brochée en un ou deux volumes, 25 francs. Le cartonnage en percaline se paye en sus: En un volume, 3 fr.—En deux volumes, 4 fr, La demi-reliure chagrin, tranches dorées: En un volume, 6 fr. - En deux volumes, 10 fr. La demi-reliure chagrin, tranches rouges semées d'or: En un volume, 7 fr.—En deux volumes, I2 fr.

9

ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է ՆԵՐԿԱՅ 1887 ԹՈՒԱԿԱՆԻ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՆԸ

„ԱՂԲԻՒՐ"

ՄԻԱՄՏԵԱՅ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՀԱՆԴԷՍՈՒ

(ԵՐԵՒԱՆԵՐԻ ԵՒ ԴԱՍՏԻԱՐԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ)

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարէկնը լոյս է տեսնում 12 համար, 3 – 4 տպագրական թերթից բաղկացեալ համարը)

Ներկայ 1887 թուականից «Աղբիւրը» կը հրատարակուի նոյն ուղղութիւնով՝ անհամեմատ շքեղ քան նախորդ տարիները, դիրքն աւելի մեծացրած, փոխանակ 2—3 թերթի՝ 3—4 թերթ, և ծնողների բաժինը կը հրատարակուի՝ տարին երեք անգամի փոխանակ, ամեն ամիս առանձին տետրակներով։

Պրէմիաները կը լինին մեր թարգմանչաց՝ որոց ՍԱՀԱԿԱՅ և ՄԵՍՐՈՊԱՅ մեծադիր (62 սանտիմ երկարութիւնով և 45 ս. լայնութիւնով) վիմագրուած պատկերները։ Այդ պրէմիաներն արդէն պատրաստ են և բաժանորդ դրուողն անյապաղ կը ստանայ Թիֆլիզում խմբագրատանը, իսկ օտարաքաղաքացիներին կուղարկուեն բաժանորդագինն ստանալուց յետոյ իսկոյն։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

I) Վէպեր, մանրավէպեր, զրոյցներ, առակներ, հէքեաթներ, Հանապարհորդութիւններ, կենսագրութիւններ։ II) Բանաստեղծութիւններ։ III) Գիտութիւն և արուեստ։ IV) Հետաքրքիր տեղեկութիւններ։ V) Այլև այլք։

ՋՈՒԱՐՃԱԼԻՔ

VI) Մանկական, Ֆրեօբէլեան, շախմատի և այլ խաղեր։ Բերուստներ, թուաբանական խնդիրներ։ Անեկդոտներ, հանելուկներ, շուտասելուկներ։ VII) Երգեր՝ ճայնագրած (նոտաներով)։

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

VIII) Կրթութեան և դաստիարակութեան վերաբերեալ յօդուածներ և տեղեկութիւններ։ IX) Առաջարկութիւններ, խորհուրդներ։ X) Մատենախօսութիւն և նոր գրքեր։ XI) Խառն լուրեր։ XII) Պատասխաններ. Յայտարարութիւններ։

Դարձեալ կրկնում ենք՝ որ թէ ներկայ 86 եւ թէ անցեալ 85 թուականների պէս տարուայ հէնց սկզբից ստիպուած չլինինք «Աղբիւրի» բաժանորդագրութիւնը դադարեցնելու №№-ի ՍՊԱՌՈՒՄԱՆ ՊԱՏՃԱՌՈՎ. խնդրում ենք մեր բաժանորդներին վերանորոգել, եւ թէ նոր կամեցողներն անապարեն ստորագրուել, որպէսզի մենք եւս կարող լինինք մօտաւորապէս որոշել տպուելու օրինակների քանակութիւնը։

«Աղբիւրի» տարեկան բաժանորդագինը 3 ռ. է, անբաժան են դրբանցից և պրէմիաները, որոնց գինն է 2 ռ. ուրեմն «Աղբիւր» ստանալ կամեցողները պէտք է ուղարկեն թէ «Աղբիւրի» տարեկան բաժանորդագինը և թէ պրէմիաների վճարը ընդամենը 5 ռուբլի։

Հասցէն՝ Тифлисъ. Редакція «Агбюръ», իսկ արտասահմանից՝ Tiflis (Caucase) Rédaction du journal «AGBUR».

Խմբագիր-Հրատարակիչ՝ ՏԻԳՐԱՆ ՆԱԶԱՐԵԱՆՑ

ԱՂԲԻՒՐ

ՄԻԱՄՍԵԱՅ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ԵՔԵՂԱՆԵՔՔ

ԵՒ

ԴԱՍՏԻԱՐԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ

№ 2

ՓԵՏՐՈՒԱՐ

ԹԻՖԼԻԶ
ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆՑԻ ՏՊԱՐԱՆ
ՕՐԲԵԼԵԱՆ ՓՈՂՈՑ, № 1 | 2
1887

Дозволено цензурою, Тифлисъ, 25 Января 1887 г.

Типографія И. Мартиросіанца, на Орб. ул., д. № 1 и 2

ՁՄԵՌՆ



Մեռն է. դաշտեր, լեռներ
ու ձորեր
Ողջամբ ծածկուել են սիպ-
տակ սաւանով,
Ուր աչք ես ածում, ալևոր ծերը
Սարսափ է բերում իր դաժան դէմքով...

Դառնաշունչ քամին փչում է անդադար,
Ձիւնի փոշիից սիւներ կանգնեցնում,
Իսկ բարձրից ձիւնը անվերջ, անսպառ,
Որպէս յորդ հեղեղ, թափվում ու թափվում:

Մեռելութիւն է չորս կողմը տիրած,
Լռել է աշխարհ, լուռ է բնութիւն.
Դաժան ձմեռը իր ցուրտ կապանքով
Խստաւ կապել է ամենքի լեզուն:

Լռել են թռչունք—չեն թնդում, սար ձոր,
Դադրել է կեանքը բնութեան գրկում.
Ձի՛ հնչվում կայտառ գեղջկուհու ձայնը,
Ձի՛ շողում մանդաղն հնձւորի ձեռքում։

Սառել է երկինք. սառել է երկիր.
Օրն է վշտաբեր, տխո՞ւր, տաղտկալից.
Տնքում, հեծում է արարած աշխարհ,
Անցորդի շունչը սպառվում է ցրտից։

Դուրսը կապուել է մարդկանց անցուդարձ,
Փակուել են ամենքն իրանց տներում.
Հարուստը քրտնած՝ ծաղրում է ձմրան,
Իսկ խեղճ աղքատը՝ սարսում ու դողում...

ՍՆԱՐ

ԱՐԵԳՆԱՋԱՆ

ԿԱՄ

ԿԱԽԱՐԴԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ

4.

Երբ որ Արէգը մօտեցաւ բարձր աշտարակին, ՝Հետզհետէ երևացին և ուրիշ շատ տներ, և նրա առաջև բացուեցաւ մի մեծ քաղաք։ Մօտեցաւ քաղաքաղրան, տեսաւ մի քանի մարդիկ կանգնած, հարցրեց նրանց.

—Տղերք, ինչ քաղաք է սա, և որտեղ են իջնում օտարականները։

Մարդիկը ձայն չհանեցին։

—Ձեզ եմ ասում, տղերք, չէք հասկանում։

Ձայն չկայ։

Երևի խուլ են, մտածեց Արէգը և գնաց ձեռք դիպցրեց նրանց։

—Ո՞վ Երկինք, բացագանչեց Արէգը, այս ինչ եմ տեսնում. այս ինչ հիանալի արձաններ են, իսկ ես կարծեցի, թէ ուղիղ մարդիկ են։ Այս ինչքա՜ն ճարտար քանդակագործ է եղել սրանց շինողը...

Արէգը կարծելով թէ իր տեսածներն ուղիղ շինուվի արձաններ են, ներս մտաւ քաղաքը և նրա առջև բացուեցան նորանոր տեսարաններ, բոլորն էլ քարեղէն։

Ահագին շուկայ, կարգին խանութներ, թէ կրպակ, թէ տուն, թէ կատու, թէ շուն, ուտելիք ու հագնելիք, գեղեցիկ գոլգեր և ուրիշ զարդեր... բոլորը, բոլորը քարացած։ Ոչ ծուխ, ոչ կրակ, ոչ ձայն, ոչ շունչ... կեանքի հետք ու նշոյլ չկայ...

— Ես հիմա հասկացայ. սա է Աղաւնի աղջկան ասած քարէ քաղաքը, ասաց Արէգը և սկսեց շրջել քաղաքի մէջ, ուր ամեն մի քայլափոխում մի նոր տեսարանի էր հանդիպում։

Մի տեղ մի խումբ մարդիկ կանգնած՝ որպէս թէ իրար հետ խօսում են. մէկի դէմքը բարկացած է և բերանը բաց, կարծես միւսին հայհոյում լինի. մէկը ծիծաղում է, միւսը լաց է լինում. մի կին՝ երեխան գրկած՝ ողորմութիւն է ուզում. մի տեղ հարսանեաց հանդէս է իր ամեն սարք ու կարքով. հարսին տանում են փեսայի տուն։ Մէկ խօսքով՝ եթէ շարժման մէջ եղած մի քաղաք մի վայրկենում տեղնուտեղը քարանայ, ինչ պատկեր կստանայ, ահա այդպիսի մի պատկեր էր ներկայացնում քարացած քաղաքը։ Արդարաճառը միրգը քաշել է և կիսով չափ ածել առնողի դամբիւղը, մինչև միւս կէսն ածելը՝ քարացել են՝ ինքն էլ, կշեռքն էլ, առնողն էլ, միրգն էլ. ահա այսչափ արագ էր եղել քարանալը։

—Խեղճ մարդիկ, ասաց Արէգը, հող դաւնալու էլ չէք արժանացել, այլ դաւել էք ծախու ապրանք։ Ճշմարիտ, եթէ մէկը այս անթիւ արձանները կարողանար տանել հեռու աշխարհքներ վաճառելու, անչափ հարստութիւն կը դիզէր։ Ահա այս նորապսակ աղջկայ արձանին՝ ով գիտէ՝ իր քաշովը-մէկ ոսկի կըտալին։ Բայց ի՞նչ եմ մտածում ես էլ. այս թշուառութիւնն աշխարհս տեսնողը՝ էլ ի՞նչ կարող է հարստութեան վրայ մտածել։ Ահա հարստութիւն մեր առջև պատկերացած իր իսկական կերպարանքով... Ա՜խ, երանի թէ սրանցից մէկը լեզուաւո-

բուէր և ինձ պատմէր իրանց գլխի անցքը։ Արի մէկ կը-բղաւեմ, ինչ կըլինի՝ կըլինի։

—Ով քաղաքացի՛ք... ինչո՞ւ էք քարացել... կանչեց Արէգը։

—Քարացե՛լ... արձագանգ տուին բոլոր քարերը։

—Ք...ա՛...ր... յանկարծ մի նոր ձայն լսուեցաւ։

—Ահա ձայն լսեցի, ասաց Արէգը և մէկ էլ բղաւեց.—Ո՞վ կաք կենդանի՛...

—Ե՛...ս... պատասխանեց ձայնը։

Արէգը որոշ կերպով լսեց, թէ որտեղից է գալիս ձայնը, գնաց դէպի այն կողմը։ Մի դեղեցիկ ապարանք էր, առաջևն ընդարձակ պարտէզ, բոլորն էլ քարացած. փոքրիկ մի ծաղկոցում նա դտաւ մի քարացած մարդու կենդանի գլուխ։

—Ո՞վ ես դու, ո՛վ մարդ, հարցրեց Արէգը։

—Ջո՛ւր... ջո՛ւր... պատասխանեց գլուխը, հազիւ կարողանալով խօսել։

—Ջո՞ւր ես ուզում։

—Ջո՛ւր... ջո՛ւր... տո՛ւր... տո՛ւր...

—Հայրիկ, ձեր քաղաքի ջուրն էլ է քարացել, ջուր չկայ։

—Մի՛... մի՛... կաթ... կաթ...

—Մի կաթիլ ջուրը քեզ ինչ կօգնէ. քո ծարաւը մի կարաս ջրով չի յագենալ։ Ես ունիմ ինձ մօտ մի քանի կաթիլ ջուր, եթէ կրբաւականանաս, չեմ խնայիլ քեզանից։

—Հա՛... հա՛... հա՛...

Արէգը հանեց անմահական ջրի շիշը և նրանից մի քանի կաթիլ կաթեցրեց կիսարձանի բերանը։ Կենդանի գլուխը ոչ միայն կատարելապէս զովացաւ, այլ և զգաց մի վերակենդանութեան ցնցում իր բոլոր մարմնի մէջ և սկսեց պարզապէս ասել—

Դու բարի՜ հրեշտակ,
Ո՞րտեղից եկար,
Փախիր, հեռացիր
Մի առ ժամանակ.

Բայց ոչ, սպասիր,
Ես էլ եմ գալիս...
Այո՛, գալիս եմ,
Նայիր, մէկ նայիր...

Կիսարձանը կենդանացաւ և սկսեց քայլել, առաջ մի փոքր դանդաղ, յետոյ աւելի շուտ-շուտ և սկսեց փախչիլ, իր ետևից կանչելով Արէգին.—Փախիր, փախիր, որդիս, եկ իմ ետևիցս, մեզ հարկաւոր է թաքչիլ. հիմա ուր որ է, պիտի դայ քարացնող պառաւ հրէշը: Արի, արի, մտնենք իմ ապարանքը, գոնէ քեզ չգտնէ:

Արէգը մնացել էր շփոթուած, չէր իմանում, թէ ինչ անէր, բայց վերջը հետևեց փախչող մարդուն: Ձին քաշեց ներս, վարի յարկումը մի մութ անկիւնում կապեց, իսկ ինքը վերև բարձրացաւ այն մարդու մօտ:

—Ես չեմ հասկանում, այդ ինչ հրէշ է, որից այդքան վախենում ես դու, ասաց Արէգը:

—Այդ հրէշը մի պառաւ է, որդի, նա է քարացրել մեր քաղաքը. ամեն օր այս ժամանակին դալիս է նայում և զուարճանում իր չարութեան վրայ. հիմա ուր որ է՝ պիտի դայ, և եթէ մեզ տեսնէ կենդանի, իսկոյն կը-քարացնէ:

—Հիմա հասկացայ: Բայց ինչպէս է եղել, որ քեզ բոլորովին չէր քարացրել:

—Աւելի տանջելու համար: Ես այս քաղաքի թագաւորն եմ. ինձ կասեն Անդաս թագաւոր: Քաւթառ հրէշը գլուխս կենդանի թողեց՝ ասելով.—Աչքերդ բաց եմ

թողնում, Անդաս, որ տեսնես քո թագաւորութեան ոչընչութիւնը իմ զօրութեան, իմ ուժի առջև։

—Ինչո՞ւմն է նրա զօրութիւնը, կամ ինչո՞վ է նա ուժեղ, չգիտէ՞ք։

—Նրա զօրութիւնը իր գաւազանների մէջն է։ Նրա գաւազանները մահ են սփռում ամեն տեղ։ Նա մի գործիք է չար ոգիների ձեռքում և նրանցով է անում, ինչ որ անում է։ Կամ, ով գիտէ, գուցէ հէնց ինքը մի չար ոգի է, պառաւի կերպարանք առած։

—Ի՞նչ ես կարծում, եթէ դրա ձեռքից խլենք իր գաւազանները...

—Բայց ի՞նչպէս կարելի է մօտենալ նրան. միայն բարի Ոգիքը կարող են այդպիսի բան անել, կամ այնպիսի մի մարդ, որ բարի Ոգիների պաշտպանութիւնը իր կողմն ունի։

—Ինձ թվում է, որ բարի Ոգիները կրպաշտպանեն մեզ, ասաց Արէգը, և պատմեց Աղաւնի աղջկան հետ հանդիպելը, նրա արածն ու ասածը...

—Օ՜... եթէ այդպէս է, ապա ուրեմն դու մի բարի Ոգի ես, երկնքից ուղարկուած, բացագանչեց թագաւորը։ Ես կարող եմ այժմ համարձակ դուրս գալ նրա առաջը, իսկ դու ինձ մօտ թաք կրկենաս, որ երբ յարձակուի ինձ վրայ, դու իսկոյն կրբռնես նրան և զինաթափ կանես։ Ահա՛, ահա՛ երևում է նա. տես, ամպերի մէջ՝ խնոցու վրայ հեծած, օձէ մտրակը ձեռին՝ գալիս է։

—Տեսնում եմ, տեսնում... դու սիրտդ պինդ պահիր, չվախենաս, ես նրա հոգին կրհանեմ։ Այս ասելով իջան պարտէզ։ Արէգը թաք կացաւ մի քարացած ծերունու քամակում։

Պառաւը վայր իջաւ թագաւորի դիմացը, ձեռքն առաւ իր երեք գաւազաններից մէկը և սպառնալով ասաց—

Այս ինչ եմ տեսնում,
Այստեղ ո՞վ եկաւ,
Այս կեանքն, այս հոգին
Սորան ո՞վ տուաւ։

Հասէք, ոգինե՛ր,
Հասէք, շուտ հասէք,
Ձեր խեղճ պառաւին
Եկէք, օգնեցէք։

Իսկ դու, գաւազա՛ն,
Ի՞նչպէս ես զարկուել,
Որ սա նոր-մէկանց
Ոտքի է կանգնել.

Հա՛պա, գաւազան,
Հա՛պա, մէկ տեսնենք,
Քո զօրութիւնը
Մէկ այժմ էլ փորձենք։

Գաւազանը ձեռին յարձակվում էր պառաւը, որ զարկէ Թագաւորին, ասելով՝

Քա՛ր էիր, Անդա՛ս,
Էլի քա՛ր դառնա՛ս,

այդ միջոցին Արէգը բռնեց նրա մազերից և այնպէս գետին փռեց, որ պառաւը կիսաշունչ եղաւ։ Թագաւորը, որ առանց ուղիղ քարանալու, այլ միայն երկիւղից մնացել էր քարացած, նոր սրտապնդեց և մօտեցաւ պառաւին։ Գաւազանները խլեցին, և պառաւի ձեռք ու ոտքը կապեցին։

—Հիմա ինչ պատժով պատժենք քեզ, գա՛ղջելի պառաւ, ասաց Թագաւորը։

Պառաւը պատասխանեց.

Ինչ պատիժ կուզէք, մէկ է ինձ համար,
Թող ձեր պատիժը ձեզ լինի յարմար։
Բայց այդ դու չէիր, Անդաս թագաւոր,
Այլ տղայացած աղջի՛կ դօրաւոր...
Գրուած է արդէն իմ ճակատագրում,
Եւ ոգիների մատենագրում,
Թէ երբ մի աղջիկ կըդառնայ տղա՛յ,
Քո թշուառ կեանքին նա՛ վախճան կըտայ։

—Օ՜... եթէ այդպէս է, ես պատրաստ եմ, ասաց Արէգը. միայն դու պէտք է առաջ կենդանացնես այս քաղաքը։

— Թող այդպէս լինի, թող կենդանանա՛յ,
Թող ամեն մէկը իւր գործին կենայ։
Ուրիշ չարութիւն շատ ունիմ արած,
Թող Բէլիարը նրանցով շատանայ...
Ամպեր, գոռացէք,
Կայծակներ, զարկէք,
Աղբիւրք, բղխեցէք,
Գետեր, վազեցէք։
Մարդ և անասուն,
Գազան և թռչուն,
Հասաւ ձեր ժամը,
Հիմա վերկացէք...

Պառաւն իր խօսքն աւարտած, չաւարտած՝ խորին լռութիւնը յանկարծ դղրդաց. քաղաքը մտքի արագութեամբ կենդանացաւ։ Ամենքն էլ այնպէս շարունակեցին իրանց կիսատ թողած գործերը, որ կարծես ոչ քարացած են եղել երբ-և իցէ, ոչ բան։ Աքաղաղը, որ իր կանչի կիսումն էր քարացել, միւս կէսը Հիմա աւարտեց. զուռնաչին, որ զուռնան բերանումն էր քարացել, շարունակեց ածելը. պար եկողն էլ, որ ձեռքերը բարձրացրած էր

մնացել, շարունակեց իր պարը. խոհարարը շարունակեց մսի քափը քաշելը, և բոլորն այսպէս... Ոչ մի մարդ, բացի Թագաւորից, չիմացաւ, որ նա երբ և էլ քարացած է եղել:

—Հիմա ինչ անենք այս չար պառաւին, ասաց Թագաւորը:

—Գաւազանները ձգենք ծովը, պատասխանեց Արէգը, իսկ պառաւին թողենք երթայ. սրա զօրութիւնը վերացած է այսուհետև:

Պառաւը չուզեց կենդանի մնալ, և ասաց նրանց—

—Ինձ է՞լ, ինձ է՞լ ծովը ձգեցէք,
Այնտեղից մօտ է Սանտարամետը,
Մահացու կեանքից ինձ ազատեցէք,
Թող ինձ ընդունի Սատանապետը:
Լրացաւ արդէն մի հազար տարին,
Որ ես զործիք եմ մեծ Բէլիարի,
Միշտ չար զործեցի, չիմացայ բարին,
Թող այժմ նորա կամքը կատարի:

Դեռ պառաւն իր խօսքը չէր աւարտել, որ Թագաւորի մեծ վէզիրն ու սպարապետը եկան և խոր գլուխ տալով Թագաւորին՝ ասացին:

—Տէ՛ր արքայ, բոլոր զօրքը պատրաստ է, քո մեծութեան հրամանին ենք սպասում:

—Ինչո՞ւ համար էք պատրաստել զօրքը, հարցրեց Թագաւորը զարմանալով:

—Մենք կատարեցինք քո հրամանը. Թշնամու զօրքը մօտենում է, պէտք է նրա առաջքն առնել:

—Սպասեցէ՛ք, սպասեցէ՛ք... այո՛, այո՛, ես հիմա յիշում եմ... այդ մեղանից ուղի՞ղ քառասուն տարի առաջ էր, ինչ որ ասում էք. մեր քարանալու օրն էր... Թշնամու զօրքերը եկան և մեզ քարացած գտնելով՝ սարսափած փախան...

Վէզիրն ու սպարապետը իրար երես նայեցան և շշշնջացին միմեանց.—Թագաւորը խելագարուել է...—Այո՛, այո՛, զարմանալի՜ փոփոխութիւն. երեկ չէ՞ր, որ մօտն էինք. մէկ օրուայ մէջ ծերացել է...

—Տեսնո՞ւմ էք դուք այս պառաւին, ասաց Թագաւորը, սա է մեր քաղաքի քարացնողը: Քառասո՞ւն տարի շարունակ սա մեր քաղաքը քարացրած պահեց...

Վէզիրն ու սպարապետը Թագաւորին գլուխ տալով՝ համաձայնութիւն ցոյց տուին, որ իբր Թէ հաւատում են նրա ասածին, բայց իրար հետ շշշնջալով՝ «Հաստատ խելագարուած է սա», ասացին:

—Եթէ սա չլինէր, շարունակեց Թագաւորը, ցոյց տալով Արէգին,—եթէ սա չլինէր, մենք յաւիտեան քարացած կրմնայինք: Սա որ մի հրաշքով աղջկանից տղայ էր դառել, և աղաւնի դարձող աղջկանից անմահական ջուր էր ձեռք բերել, պատահմամբ ասեմ, Թէ Երկնքի տնօրէնութիւնով, եկաւ և ինձ կենդանութիւն տուաւ իր ջրով, այս չար պառաւին էլ բռնեց ու զինաթափ արաւ: Այժմ այս պառաւին ձեզ եմ յանձնում. տարէք սրան ծովը ձգեցէք. ահա այս գաւազաններն էլ ծովը ձգեցէք...

Վէզիրն ու սպարապետը դարձեալ սկսեցին շշշնջալ, դէպի մի կողմ քաշուելով:

—Հաստա՛տ, Հաստա՛տ խելագարուել է, պնդեց վէզիրը:

—Դրան ինչ կասկած, կրկնեց սպարապետը: «Սա՝ ասում է, աղջիկ է եղել, տղայ է դարձել, մի աղջիկ էլ աղաւնի է դառել, ինքն էլ անմահական ջուր է խմել, իսկ մենք՝ ոպէս Թէ՝ քառասուն տարի է, որ քարացած ենք եղել...» Խելքը գլխին մարդը մի՞Թէ այդպիսի բաներ կըխօսի:

Այս մարդոց կասկածը շատ բնական էր: Վէզիրը

քարանալուց առաջ ճաշի էր նստած և դդալը ձեռին՝ բերանը տանելիս՝ քարացել էր, իսկ այսօր դդալը տարել էր բերանը և իր ճաշը վերջացրել, եկել։ Սպարապետը ոտքի մէկը ձիու սոպանդակումը դրած հեծնել ուզելիս էր քարացել, և այսօր էր ոտը միւս կողմն անց կացրել և հեծել ձիուն ու եկել. էլ ուրեմն ինչպէս կարող էին երևակայել, որ երբ և իցէ քարացած են եղել։

—Դիտես ինչ կայ, թաղաւոր, ասաց Արէգը ծածուկ։ Այս մարդիկը քո խօսքերին չեն հաւատում և քեզ խելագար են համարում։ Այս շատ վտանգաւոր բան է. կարող են քեզ ճշմարիտ խելագար համարել և թաղաւորութիւնից զրկել։ Հիմա դու սպասիր, տես ես ինչ եմ անում, և ինձ հետևիր։ Յետոյ դառնալով վէզիրին ու սպարապետին՝ ասաց —

Եկէք, պարոններ, եկէք,
Մի կասկածէք ընաւին,
Տեսէք ինչպէս եմ պատժում
Այս անըզգամ պառաւին։

Այս ասելուց յետոյ կախարդական դաւազաններից մէկը ձեռին՝ մօտեցաւ պառաւին և ասաց.

Հրամանով
Բէլիարի,
Ուրիէլի,
Սաթայէլի,
Քար դառ, պառաւ, քար...

Ասեց ու զարկեց դաւազանը։ Պառաւը դարձաւ մի քած էշ և սկսեց խառանչել...

— Ա՛յ քեզ բան, բացագանչեց Արէգը. երևի այս դաւազաններից ամեն մէկը մի ջոկ զօրութիւն ունի, կամ գուցէ իմ անէծքս էր իշավարի և պառաւն իր խառանչիւնով ծիծաղում է ինձ վրայ։ Փորձենք երկրորդ դաւաղանը։

Սաթայէլի ահեղ սրով,
Տարտարոսի մեծ զնդանով,
Քեզ զարկում եմ, անիծում եմ,
Քա՛ր դառ, պա՛ռաւ, քա՛ր...

Պառաւը դարձաւ մի սև ագռաւ և ուզեց թռչել, բայց ոտները կապած էին, չկարողացաւ...

—Սպասեցէք, երրորդ գաւազանը փորձենք։

Առաւ երրորդ գաւազանը և սկսեց աւելի թունդ անիծել, կարծելով, թէ իր անէծքի թուլութիւնից է, որ պառաւը քար չի դառնում։

Քարեկարկո՛ւտ,
Արիւնաձրե՛ւ,
Մէգ, մառախո՛ւղ,
Թանձր մռա՛յլ,
Խիտ աղջամո՛ւղջ
Թունդ երկրաշա՛րժ,
Մահտարաժա՛մ,
Որո՛տ, կայծա՛կ,
Հրդէհ, կրա՛կ,
Նաւթահեղեղ
Դժոխայինն
Թափուի գլխիդ,
Ո՛վ սև ագռաւ,
Դահի՛ճ պառաւ...
Քեզ զարկում եմ
Չա՛ր մահակով,
Դաղանակո՛վ,
Որոտմունքի
Թունդ մտրակով,
Կայծակների
Ահե՛ղ զարկով,
Անէծքս ա՛ռ,
Դարձի՛ր լեռ քար...

Ասեց ու զարկեց գաւազանը, և պառաւը գարձաւ մի դաժանատեսիլ քարէ արձան։ Յետոյ դառնալով վէզիրին ու սպարապետին, ասաց Արէգը.

Հիմա ամառն է, բայց դուք չգիտէք.
Այս շոգ կրակին մուշտակ էք հագել.
Ձմեռն է եղել, երբ քարացել էք,
Էնդուր էք հիմա այդ ձևով եկել։
Մարդ ուղարկեցէք մի ուրիշ քաղաք,
Որ գնայ բերէ ձեր տարեթիւը,
Նրանով կիմանաք ձեր գլխի անցքը,
Կուղղէք ձեր այժմեան սխալ հաշիւը։
Եթէ ոչ՝ ես ձեզ էշեր կրշինեմ,
Կամ ոև ագռաւներ, երթաք կռկռաք,
Որ այնուհետև ձեր թագաւորը
Ինչ որ ձեզ ասէ՝ իսկոյն հաւատաք...

—Օ՜... ես հիմա հաւատում եմ, հաւատում, ասաց վէզիրը. այս բոլորը աչքովս տեսնելուց յետոյ՝ էլ չեմ կարող չհաւատալ... Ճշմարիտ որ ձմեռն է եղել, իսկ հիմա... ամառն է... այո՛, ամառն է...

—Ես էլ եմ հաւատում, ես էլ... ես չեմ ուզում ոչ էշ և ոչ ագռաւ դառնալ, իսկ քարանալու սիրտ չունիմ... իրաւ, ի՞նչ շոգ է այսօր, քիչ է մնում, որ այրուիմ...

—Տէր արքայ, հաշը պատրաստ է, թագուհին ձեզ է սպասում, ասաց մի պալատական, խոր գլուխ տալով թագաւորին։

—Երթանք, երթանք, մի կտոր հաց ուտենք, ասաց թագաւորը։ Ահա քառասուն տարի է, որ պատառ չեմ դրել բերանս, բայց, ուղիղն ասեմ, չեմ էլ քաղցել։ Միայն ծարաւս շատ էր տանջում ինձ երբեմն, և աւելի ևս սաստկացաւ, երբ լսեցի Արէգի ձայնը։ Երևի իմ ծա-

բաւիլն էլ Երկնքի կամքովն էր, նրանով պիտի գտնէի իմ փրկութիւնը... Երթանք, երթանք մի կտոր Հաց ուտենք...

Անդաս թագաւորը լաւ կշտացրեց թէ Արէգին և թէ նրա Բաղիկին։ Արէգին պահեց թագաւորը մինչև քըսան օր. այդ քսան օրուան մէջ շատ թագաւորներից դեսպաններ եկան և շնորհաւորեցին Անդասի և նրա քաղաքի վերակենդանութիւնը։ Նոյն քաղաքից հազարաւոր մարդիկ կային հեռաւոր երկիրներ գնացած՝ որոնք իրանց քաղաքին պատահած պատուհասից վախենալով՝ չէին վերադառնում. այժմ եկան աւելի բազմացած թուով, որդոց և թոռանց տէրեր դարձած, մինչդեռ քաղաքի աճելութիւնը՝ քարանալու պատճառով՝ դադարել էր։

Նորեկները իմանալով՝ որ Արէգն է այն բարի հրեշտակը, որ յաղթել է չարին և կեանք տարածել չարի մահ սփռած տեղը՝ նրան աստուածավայել պատիւներ տուին ճոխ խնջոյքներով։ Թագաւորն ինքը մի մեծ խնջոյք տուաւ, ուր ներկայ էին հազարաւոր անձինք։ Ինքն էր բոլոր զուարճութիւններին ընթացք տուողը, ինքն էր առաջարկում կենաց թասերը։ Երբ Արէգի կենաց բաժակը ձեռքն առաւ, սկսեց խօսել թագաւորը և ասաց—

—Ի՞նչ էինք երեկ, և ի՞նչ ենք այսօր.
Դու պատասխանիր, Անդաս թագաւոր.
—Քա՛ր էինք երեկ, քա՛ր անշունչ, կանգուն,
Իսկ այսօր՝ մարդիկ, կենդանի, շարժուն...
Ի՞նչ հեշտ պատասխան... բայց ո՞վ կըմբռնէ,
Ո՞վ կըզգայ թէ ի՞նչ սոսկալի բան է—
Չարունակ տանջուիլ քա՛-ռա՛-սո՛ւն տարի,
Փշալից ձեռքում մի անգութ չարի...

Եւ ահա այդ խիստ, չար կապանքներից,
Անխորտակելի այդ շղթաներից
Մեզ ազատում է մի չքնաղ Ոգի,
Ամեն տեղ սփռում և կեանք, և հոգի...
Ո՞վ էր այդ Քաջը, այդ Առաքինին.
—Ահաւասիկ նա—Արէգ պատանին.
Սա է, որ սրբեց իմ սուգն ու լացը.
Խմեցնք Արէգի անգին կենացը...

Թագաւորի այս առաջարկութեան վրայ հազարաւոր ձայներ միասին «կեցցէ՛ Արէգ» գոչելով՝ թնդացրին ամբողջ ապարանքը։ Աշըղներն էլ՝ որ թագաւորի ակնարկելուն էին սպասում, իմբովին հնչեցին յիսնաղի քնարները և երգեցին միաձայն՝

Արի բիւլբիւլ, ուրախացիր,
Քո վարդն ահա բացուել է.
Վերադարձիր, էլ մի՛ վախիր,
Քո թագուհին բացուել է։

Արէգն իջաւ Երկնքից,
Ամենայն տեղ կեանք սփռեց,
Քարերն ամեն հոգի առան,
Քո կարմիր վարդն էլ բացուեց։

Արի բիւլբիւլ, ուրախացիր,
Քո վարդուհին բացուել է,
Արի երգիր, էլ մի վախիր,
Քո թագուհին բացուել է...

Արէգը մէկ Արեգակ է,
Քաջ պատանու կերպ առած,
Սա բարի է, առաքինի,
Արևի պէս ողորմած։

Արի բիւլբիւլ, ուրախացիր,
Քո վարդուհին բացուել է.
Արի երգիր, էլ մի վախիր
Քո թագուհին բացուել է...

Աշըղները դեռ երկար կըշարունակէին Արէգին գովասանել, եթէ Արէգը՝ համեստութիւնից ստիպուած՝ չընդհատէր նրանց իր հետևեալ պատասխանական ճառով—

Ես մի թոյլ էակ, չնչին արարած,
Զգիտեմ արդեօք ինչ ունիմ արած,
Որ ինձ տալիս էք այսքան փառք, պատիւ,
Այսքան դորովանք, մաղթանք անհաշիւ.
Ի՞նչ գտաւ արդեօք Երկինքն ինձանում,
Ես այդ չգիտեմ և չեմ իմանում,
Որ ցոյց է տալիս այսչափ սէր և գութ,
Հարթում է առջևս ամեն խոչ ու խութ—
Առիւծն իմ առջև քծնում է շան պէս,
Վիշապը դառնում մի վախկոտ մողէս,
Աղբիւրը է բղխում ապառաժ տեղում,
Դարաւոր ճահիճն առաջիս ցամքում...
Եթէ բոլորը, ինչ որ տեսել եմ,
Այժմ մի առ մի ձեր առջև պատմեմ,
Կըտեսնէք որ սա մի բախտ է միայն
Եւ շնորհք Երկնքի միջամտութեան...
Ուստի մենք Նորան և միայն Նորան
Պիտի համարենք պաշտելու արժան.
Նա վերացրեց չարի զօրութիւն,
Նորան պիտի տանք փառք և գոհութիւն...

Ընայած Արէգի համեստութեանը՝ քաղաքացիք նրան դիւցազանց կարգը ձգեցին, որ երախտապարտ չմնան Եր-

կընքի առջև։ Եւ ահա ինչպէս։ Տեսան, որ պառաւի սոսկալի արձանից վախենում են բոլոր երեխաները և շատ մեծեր էլ՝ նրան տարան ծովը նետեցին։ Նա ընկաւ ուղղակի դժոխքի վրայ և իր ուժգին դարկովը ամբողջ դըժոխքը իր միջի չար ոգիների անթիւ լեգէօններովը մի հազար մղոն էլ ցած գլորեց... Դրանից յետոյ Հաւաքուեցան քաղաքի բոլոր ճարտարապետներն ու նկարիչները, քաշեցին Արէգի պատկերը, Բազիկի վրայ հեծած. նրա ձևով շինեցին մի ոսկեձոյլ արձան։ Այդ արձանը կանգնեցրին քաղաքի կենդրոնում եղած մեծ պարտէզումը, որ զբօսավայր էր ամենի համար, մանաւանդ երեխայոց, որոնք այնուհետև միշտ նրա չորս կողմումն էին խաղում և վրան նայելով՝ զմայլում։ Արէգը չտեսաւ իր արձանը. նա այդ ժամանակ արդէն գնացած էր։ Նա երազումը տեսաւ, որ Նունուֆարը վերջին շնչումն է, շտապեց վերադառնալ, որ գուցէ կարողանայ օգնութիւն հասցնել։

Ղ. ԱՂԱՅԵԱՆՑ

(Կըշարունակուի)

ՄՇԱԿԻ ՔՐՏԻՆՔԸ

ափուել էր ձիւնը բամբակի նման,
Աշխարհն սպիտակ վերմակով ծածկել,
Քնքոյշ դալարիք—իբրև թոռնիկներ -
Պառաւ տատի պէս իւր ծոցն էր առել։

Սակայն կամակոր, դառնաշունչ քամին
Աջ ու ձախ փչում, թիփիր էր անում,
Իր հանդիպողին խփում, զարկում էր,
Էլ աչք, քիթ, պռունկ նա չէր խնայում։

Եւ ահա ծանր, դողդող քայլերով
Մի մարդ է գալիս բեռը շալակին,
Երերվում է նա, երբեմն կանգնում,—
Երկար է ճանապան... սառած է ուղին։

Յուսահատ դէմքով նայում է առաջ
Եւ խոր հառաչանք արձակում սրտից,
Առատ քրտինքներ՝ ցրտին չնայած՝
Հոսում են նրա կնճռալից ճակտից։

Դէպի վեր նայել անկարելի է—
Խաւար ամպերով ծածկուել է երկինք.
Փչում են միայն կատաղի հողմեր,
Տանում իրանց հետ մշակի քրտինք...

ՍՐԻՆԳ

ՀԱՅՐԸ ԵՒ ՈՐԴԻՆ

(Ալֆոնս Դոդէից)

Այսօր մի ինչ որ բանի համար անբաւական է ծերունի դարբին Լօրին։ Սովորաբար գործը վերջացնելուն պէս նա փակում էր դարբնոցը, տուն վերադառնում և նստում տան դռան մօտ նստարանի վրայ՝ տօթից և օրուայ աշխատանքի յոգնութիւնից հանգըստանալու։ Նախ քան դարբնոցում բանող վարպետներին արձակելը, նա խմում էր նրանց հետ մի քանի բաժակ թարմ գարեջուր՝ նայելով մօտով անցնող բանուորների վրայ, որոնք վերադառնում էին զանազան գործարաններից։ Բայց այսօր նա տուն վերադարձաւ ուշ՝ հէնց ճաշի ժամանակ, և այդպէս մռայլ ու անբաւական։ Պառաւ Լօրին—նրա կինը, նայելով ամուսնու զայրացած դէմքի վրայ, ինքնիրան մտածեց. «Ի՞նչ է պատահել սրան. չլինի թէ, Աստուած մի՛ արասցէ, Խրիստիանից վատ լուր է ստացել. գուցէ Խրիստիանը հիւանդ է»։ Սակայն չհամարձակուելով հարցուփորձ անել ծերուկին՝ աշխատեց հանգըստացնել երեք կայտառ շէկ մանուկներին, որոնք հօր անբաւական դէմքի վրայ ոչինչ ուշադրութիւն չէին դարձնում և բոխկից ու հում սերից պատրաստած աղցանով բերանները լցնելով՝ շարունակում էին իրանց ծիծաղը։

Վերջապէս Լորին խօսեց՝ բորբոքուած սրտով դէն մղելով իրանից կերակրի ափսէն. «Խարդախնե՛ր, դաւաճաննե՛ր. նախատի՛նք Ֆրանսիայի»։

— Բաւական է Լորի, ասաց կինը. այդ ո՞վ է քեզ այդպէս բարկացրել։ Հանգստացի՛ր։ Ո՞ւմ մասին ես խօսում։

Լորին կատաղեց։

«Խօսքս այն հինգ-վեց անզգամների մասին է, որոնց այսօրուանից դու կարող ես հանդիպել գերմանացիների հետ թեւակցած զբօսնելիս։ Անպիտանները թողել են զինուորական ծառայութիւնը, թողել են ֆրանսիական բանակը, որ այժմ այնչափ պէտք ունի զինուորների, և վերադարձել են Հայրենիք, որպէսզի գերմանացի դառնան *)։ Ամօթ, ամօթ։ Եւ դեռ ֆրանսիական նշանագգեստ էլ են կրում։ Անպիտանները։ Երբ մտածում ես, թէ այժմ ամենայն օր վերադառնում են այստեղ այս էլզասցիները... էլզասցիները... Ամօթ էլզասին։

Պառաւը փորձեց նրանց մի կերպ պաշտպանել.

— Պէտք է խոստովանուել, որ նրանք էլ այդչափ մեղաւոր չեն։ Այդ Ալժիրը, ուր նրանց ուղարկում են, այնքա՛ն հեռու է... Գուցէ նրանց քաշող բերողը Հայրենիքի կարօտն է եղել։

Լորին խփեց բռունցքով սեղանին։

— Լռի՛ր, դու, կին... Դուք, կանայք դո՛ր սովոր էք դրծ ունենալ փոքրիկ մանուկների հետ և ամեն ինչ չափում էք նրանց կշիռով։ Այն ինչ ես քեզ ասում եմ, որ այդ մարդիկը՝ խարդախներ, մատնիչներ, Հայրենիքի դաւաճաններ են։ Եւ եթէ, Աստուած ոչ անի, մեր Խրիստիանը ընդունակ լինէր այդպիսի ստորութեան, ես ինքս կրկիսէի նրան

*) Էլզաս-Լոտարինգիան՝ Ֆրանս-Պրուսական պատերազմից յետոյ Ֆրանսիայից անցաւ գերմանացիների ձեռքը։

Ծանօթ. Թարգմ.

իմ սրով։ Եւ այս խօսքերս այնպէս ճիշտ են, ինչպէս և այն, որ իմ անունը Լօրի է, և որ եօթը տարի ծառայել եմ մեր Հայրենիքին իբրև Հրացանակիր զինուոր։

Դարբինն այս ասելով՝ պարզեց իր ուժեղ ձեռքը դէպի պատից քարշ արած զէնքերը, որոնց տակ կախած էր և իր որդու պատկերը զինուորական հագուստով։ Բայց հէնց նայեց երիտասարդ էլզասցու պարզ և աղնիւ դէմքին թէ չէ, իսկոյն հանդարտուեց, և մինչև անգամ ժպտաց։

«Ցիմարութիւն է այս աստիճան պղտորել սիրտը», ասաց նա, վերցնելով նորից գդալը։ «Ո՛չ, իմ Խրիստիանը երբէք չի ցանկալ պրուսացի դառնալ։ Իմ որդի՛ն, որ այնքան կոտորել է նրանցից պատերազմի ժամանակ...»։ — Եւ ծերունու մռայլ տրամադրութիւնն անցաւ։ Նա հանգիստ կերպով վերջացրեց իր ճաշը և գնաց պանդոկ երկու բաժակ գարեջուր դարդակելու։

Պառաւ կինը մնաց միայնակ։ Երեխաներին պառկեցնելուց յետոյ նա վերցրեց իր ձեռքի կարը և գնաց նստեց դէպի պարտէզը բացուող դռան շէմքին։ Նա սկսեց կարկատել իր մարդու հին հագուստը։ Ժամանակ առ ժամանակ նա հառաչում էր և ինքն իրան ասում.

—Սակայն չգիտեմ... Գուցէ նրանք և՛ անզգամներ են, և՛ դաւաճաններ... Գիտեմ միայն, որ նրանց մայրերը շատ բախտաւոր պէտք է լինին...։

Եւ նա սկսեց մտածել իր Խրիստիանի վրայ։ Յիշեց, թէ ինչպէս նա Ալժիր գնալուց առաջ հէնց այս ժամանակ աշխատում էր այստեղ՝ պարտէզում։ Նա նայեց ջրհորին, որից Խրիստիանը ջուր էր հանում. և այնպէս կենդանի ներկայացրեց որդուն, որ կարծես նա կանգնած լինէր իր առաջ կապոյտ վերնաշապիկով և երկայն գանգուր մազերով, որոնց նա ստիպուած էր կարճ խուզել՝ զինուոր դառնալու պատճառով։

Մէկ էլ յանկարծ նա վեր թռաւ։ Դէպի դաշտը բացուող

փոքրիկ դռնակը ճռռաց, բայց շները չհաչեցին, և լսելի եղաւ, որ մէկը մտաւ պարտէզ և գողի նման թաքնուելով թփերի ետևից, սկսեց առաջ գալ։

— Մայրիկ։

Պառաւի առաջին կանգնած էր Խրիստիանը, այրուած, փոշոտուած, շփոթուած, անհանգիստ...

Նա վերադարձել էր ուրիշների հետ, և արդէն մի ամբողջ ժամ թափառում էր տան շուրջը, սպասելով մինչև Հայրը դուրս գնայ տանից։ Մայրն ուզեց յանդիմանել նրան, բայց չկարողացաւ։ Այնքա՛ն երկար ժամանակ էր, նա չէր տեսել որդուն, չէր գրկել նրան։ Խրիստիանը ասաց մօրը, որ սաստիկ կարօտել էր Հայրենիքին, ընտանիքին, դարբնոցին. ծառայութիւնը օրէցօր ծանրանում էր, ընկերները ծաղրում էին նրան, և իր էլզասական արտասանութեան համար գերմանացի էին անուանում։

Մայրը հաւատաց բոլորին, ինչ որ նա ասաց։ Խօսելով մտան սենեակ։

Փոքրիկ երեխայքը, զարթնելով, բոպիկ դուրս վազեցին միւս սենեակից, որ գրկախառնուեն իրանց մեծ եղբօր հետ։ Մայրը կամենում էր կերակուր բերել նրա համար, բայց Խրիստիանը չուզեց. նրան տանջում էր միայն ծարաւութիւնը և նա ագահութիւնով խմեց մօր բերած մեծ ամանով ցուրտ ջուրը։ Բայց ահա՛ դուրսը լսուեցին քայլերի ձայներ։ Այդ դարբինն էր։

— Ի սէր Աստուծոյ, Խրիստիան, թաքնուի՛ր շուտով մի տեղ, Հայրդ գալիս է... Ես պէտք է խօսեմ նրա հետ, բացատրեմ նրան...։— Եւ նա մղեց որդուն կաւէ մեծ վառարանի ետևը։ Յետոյ դողդողջուն ձեռքերով նորից վերցրեց կաբը։

Դժբախտաբար Խրիստիանի գլխարկն ու զէնքերը մընացել էին սեղանի վրայ, և Հայրը, ներս մտաւ թէ չէ, իսկոյն նկատեց դրանց։ Իսկ կնոջ դեղնութիւնը և վրդով-

մունքը լրացրին ամեն բան. նա հասկացաւ բոլորը։

—Խրիստիանն այստե՞ղ է, աղաղակեց նա սարսափելի ձայնով, և արագութիւնով վերցնելով պատից քարշ արած սուրը, վազեց վառարանի մօտ, որտեղ թաքնուել էր գունատուած և ամբողջ մարմնով դողացող գինուորը, յենուած պատի վրայ՝ որպէս զի վայր չընկնի։

Մայրը ընկաւ նրանց մէջտեղը։

—Լ՞ռի, Լ՞ռի, մի՛ սպանիր դրան։ Ե՛ս եմ մեղաւորը... Ես եմ գրել դրան, որ վերադառնայ... Ես խաբել եմ դրան, ես գրել եմ, թէ դու ես կանչում դրան, թէ դա հարկաւոր է քեզ դարբնոցի համար...

Կինը բռնեց ամուսնու ձեռքերը, համբուրում էր նրանց, հեկեկում էր, քարշ էր ընկնում նրանցից, աղաչում էր։ Մթնումը երեխայքը վախեցան, չճանաչելով բարկութիւնից և արտասուքներից փոխուած իրանց ծանօթ ձայները։

Դարբինը մի քայլ յետ կանգնեց և նայեց կնոջ վրայ։

—Ուրեմն՝ այդ դո՞ւ ես վերադարձրել դրան։ Լա՛։ Թո՛ղ դա այժմ գնայ քնելու։ Էգուց առաւօտեան ես կը-վճռեմ, թէ ինչ պէտք է անել։

Հետևեալ առաւօտեան Խրիստիանը դարթելով ծանր և անհանգիստ քնից, իրան տեսաւ իր մանկութիւնն անցկացրած սենեակում։ Փոքրիկ լուսամուտից՝ որ փաթաթուած էր բաղեղով, մտնում էին արեգակի ճառագայթները։ Ցածից լսվում էր մուրճերի ձայնը։ Մայրը նստել էր որդու գլխատակին։ Նա չէր հեռացել որդուց ամբողջ գիշեր, այնպէս վախեցրել էր նրան ամուսնու բարկութիւնը։ Ները նոյնպէս չէր պառկել ամբողջ գիշեր։ Նա մտել էր գալիս սենեակից - սենեակ մինչև առաւօտ, հաւաքելով զանազան բաներ, բանալով և կողպելով պահարաններն ու գզրոցները։ Լսվում էր որ նա հառաչում և լաց էր լինում։

Առաւօտեան նա մտաւ որդու սենեակը խիստ դէմքով. նա հագել էր՝ կարծես երկար ճանապարհորդութեան համար, բարձր կօշիկներ լայնաթեւ գդակ և ձեռքին էլ երկաթի ծայրով մի մեծ ձեռնափայտ։ Կինը և որդին երկիւղով նայեցին նրա վրայ։

—Վերկաց հագնուիր, ասաց նա որդուն։

Վրդովուած պատանին կամենում էր հագնել իր զինուորական շորերը, բայց հայրը արգելեց նրան։

—Ո՛չ, ո՛չ, այդ չպիտի հագնես... ասաց նա։

—Բայց նա չունի ուրիշ հագուստ, երկիւղածութիւնով նկատեց նրան կինը։

—Տո՛ւր նրան իմը։ Իմը այլևս ինձ չի հարկաւորուիլ։

Մինչդեռ որդին հագնվում էր, ծերունի Լօրին հաւաքեց նրա նշանագգեստը, վերարկուն և գլխարկը, կապեց այդ բոլորը միասին և դրեց իր ուսին։

—Այժմ հետևեցէք ինձ, ասաց նա։ Երեքն էլ դուրս եկան տնից և ուղևորուեցին դարբնոց։

Փուքսը փչում էր. աշխատանքը ամեն կողմ եռ էր գալիս . . .

Երբոր Խրիստիանը տեսաւ այս լայն, ընդարձակ սրահը, լսեց մուրճերի չրխչրխկոցը, որոնց վրայ նա այնքան մտածում էր այնտեղ՝ հեռու, Աֆրիկայում, նա մտաբերեց իր մանկութիւնը, մտաբերեց, թէ ինչպէս էր վազվըզում այս տեղերքում հօր ետևից, ինչպէս էր խաղում դարբնոցի շէմքին և զուարճանում մուրճերի տակից դուրս ցայտող կայծերով... Նրա սիրտը լցուեց քնքշութիւնով. նա սաստիկ ցանկանում էր հօրից ներողութիւն ստանալ, արժանանալ նրա քաղցր նայուածքին. նա երկիւղածութիւնով բարձրացրեց նրա վրայ իր աչքերը, բայց ծերունու դէմքը առաջուայ պէս խիստ էր։

Վերջապէս ծերունին խօսեց.

—Լսէր, Խրիստիան։ Ահա զնդանը, ահա և բոլոր

գործիքները։ Այս բոլորը քոնն են։ Այս բոլորն էլ նոյնպէս քոնն են, աւելացրեց նա ցոյց տալով դռնից երևացող, այգիով շրջապատուած, ուրախ տնակի վրայ։—Մեղուներ, խաղողի թփեր, տուն, բանջարանոց, այս բոլորը պատկանում են այժմ քեզ։ Սրանց համար դու կորցրիր քո պատիւը. ուրեմն, պահպանիր գոնէ այս բոլորը։ Այժմ դու այստեղ լիակատար տէր ես, իսկ ես գնում եմ... Դու պէտք է ծառայէիր Ֆրանսիային դեռ հինգ տարի էլ։ Ես կրծառայեմ քո փոխարէն։

—Լ՛ռի, Լ՛ռի, ինչ ես ասում, ինչ պատահեց քեզ, աղաղակեց վախեցած խեղճ պառաւը։

—Հ՛այրիկ, աղաչանքով դիմեց նրան Խրիստիանը։

Բայց դարբինը յետ չնայեց և մեծ-մեծ քայլերով հեռացաւ նրանցից։ Զատ չանցած՝ նա նրանցից արդէն բաւականին հեռու էր։

«Սիդի-բէլ-Աբբէսում» գրուած էր. Ֆրանսիացիների երրորդ զօրաբաժինը մտաւ նորերումս մի կամաւոր զինուոր՝ վաթսունուեօթ տարեկան հասակում։»

Օր. Շուշանիկ Տէր-Նիկողոսեան





ՈՐԲԻԿ

Երկ ու թուլակաղմ եկար այս աշխարհ
Եւ մօրրդ գրկում կառնէիր հանդիստ.
Ի՞նչ էր դառնութիւն, չարչարանք ու վիշտ՝
Քեզ ծանօթ չէին.—խաղաղ էր հոգիդ . . .

Բայց միայն, աւա՜ղ, մահը տարաժամ
Տառապեալ մօրրդ դրաւ գերեզման,
Եւ քեզ, խե՜ղճ դառնուկ, որբ, անօգնական
Թողեց օտարի մշտափակ դռան . . .

ԱՂ. ԾԱՏՈՒՐԵԱՆ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՀՈՒՍ

Կոմս. Լ. Ն. Տոլստոյի „Ясная Поляна“-ից

ուտով Հուս պատէրների մասին էլ սկսաւ խոսել քարոզների մէջ։ Նա ասում էր. «Դուք հոգևոր հայր էք կոչվում, բայց չէք ապրում նախկին քրիստոնեաների նման. դուք առաւել ձեր գոյքերի և մարմնի վրայ էք հոգ տանում, քան թէ աղղի լուսաւորութեան վրայ. հոլմրտ և արծաթասէր էք դարձել և այնպէս չէք կատարում եկեղեցական կարգերը, ինչպէս որ պահանջում է սուրբ օրէնքը»։

Այս տեսակ խօսքերի համար պատէրները Հուսի վրայ զայրացան և ժողովրդի մէջ լուր տարածեցին, թէ Հուս հերետիկոս է, թէ նրա փորի մէջ սատանայ է մրտել։ Ժողովուրդը հաւատ չէր տալիս այս բանին և շարունակում էր Հուսի քարոզները լսելու։

Այն ժամանակ պատէրները դանգատ տրին չեխացոց Վեաչեսլավ թագաւորին։ Եւ թագաւորն ասաց. «Բանի որ Հուս աշխարհականների դէմ էր քարոզում, դուք ուրախանում էիք և նրան գովաբանում. այժմ կարդը ձեզ որ հասաւ, գոհ եղէք այնով, ինչ որ լսելու էք ձեր մասին»։—Նրանք էլ հեռացան, գնացին։

Հուս խօսում էր նոյնպէս և գերմանացիների և նրանց վարժարանների վրայ։ «Չեխերի երկրում դպրոցի և ուսման տէրը գերմանացիք են դարձել»,—ասում էր նա. «Բաղաքային վարչութեան մէջ գերմանացիք են նստել, համալսարանական խորհրդարանի մէջ գերմանացիք են

բազմել. մի չեխի վրայ երեք գերմանացի է գալիս. ուր էլ դիմես, ամեն տեղերը գերմանացիք են բռնել՝ մեզ ճնշելով.—արդ ո՞ւր մնաց արդարությունը»։

Այս խօսքերը թագաւորին որ հասան, թագաւորը հրամայեց, որ խորհրդարանի մէջ մի գերմանացու դէմ երեք չեխ նստեն։ Գերմանացիներին դուր չեկաւ այս հրամանը. նրանք վիրաւորուեցան և վճռեցին թողնել Պրագը և հեռանալ իրանց աշխարհը։ «Դրանց լաւութիւն ես անում, բայց դրանք լաւութիւնը չարութիւնով են փոխարինում», — ասում էին գերմանացիք։ Քսան հազար մարդ դուրս ելաւ Պրագից։ Չեխերն այս բանին շատ ուրախ էին. բայց դարձեալ Չեխիայի մէջ մնացող գերմանացիների թիւը շատ մեծ էր։

Ահագին բազմութիւն էր հաւաքվում Բեթղէհէմի աղօթարանի մէջ. ամեն մարդ փափագում էր լսել չեխական լեզուն և չեխերի ազգային ժամերգութիւնը, որովհետև միւս եկեղեցիների մէջ քարոզները, աղօթքը և պաշտօնը լատինական լեզուով էին կատարվում, որ ժողովրդին բոլորովին անհասկանալի էր։

Պատէրները դժգոհ էին, որ Հուս չեխերէն էր կատարում ծէսերն, և ժողովրդի միտքը շփոթելու համար ասում էին. «Ահա Հուսն էլ մեզ նման մի տէրտէր է, նրան էլ մեր լատինական եպիսկոպոսն է ձեռնադրել և օրհնել. ուրեմն, օրէնքին նայելով, նա պարտական է լատինական եկեղեցու կարգերը պաշտպանել և կատարել. բայց այսպէս անելու փոխարէն, տեսէ՛ք, վեր է կացել այժմ և խախտում է ժողովրդի հաւատը դէպի այդ եկեղեցին։ Մի՞թէ այդ իրաւունք է, մի՞թէ նա այդպէս անելու իշխանութիւն ունի՞ սրբազան պապից։ Նրա արածը մի նորաձևութիւն է, հերետիկոսութիւն է»։

Իսկ Հուս քարոզում էր. «Քրիստոս ապրում էր աղքատութեան մէջ. կայք և կալուածք չունէր, տուրք և

կաշառք չէր առնում. ինչ որ Աստուած տալիս էր, այնով էր ապրում։ Դուք էլ այդպէս արէք և ժողովրդի տուածովը գոհ եղէք։ Տէրն մեր Յիսուս Քրիստոս է եկեղեցու միակ գլուխը։ Դուք ասում էք, թէ «պապը նրա փոխանորդն է». բայց Յիսուս իրանից յետոյ ոչ ոքի փոխանորդ չդրաւ, և չկայ ոչ յունաց, ոչ լատինական եկեղեցի, այլ կայ միայն մի եկեղեցի Քրիստոսի։ Արևելեան եկեղեցին առաւել ճշմարտութիւն ունի իր մէջ, քան թէ լատինականը։ Ինձնից շատ առաջ Անգլիայում կար Վիկլեֆ անունով մի քարոզիչ. նա թարգմանեց Սուրբ գիրքն անգլիերէն և ասում էր—Ոչ թէ պապի մէջ է սրբութիւնն ու եկեղեցու փրկութիւնը, հապա Սուրբ գրքի մէջ. Սուրբ գիրքը վեր է քան թէ պապը. միայն Սուրբ գիրքը կարդալով և բարի գործելով կարելի է մեր մեղքերը քաւել և արքայութեան դռները բանալ, և ոչ թէ արծաթով և տուրքերով, որ պահանջում են պատէրները։ — Սիրելի է ինձ Վիկլեֆ իր օրինակելի վարքով. սիրում եմ նրան, որովհետև խստիւ հրամայում էր քահանաներին, որ Քրիստոսի պատուէրները կատարեն, անձնական հարստութեան վրայ հոգ չտանեն և որկրամոլ կեանք չվարեն. սիրում եմ մանաւանդ և այն պատճառով, որ պաշտում էր քրիստոսին, իմ վարժապետին, առաւել քան իր անձը։ Վիկլեֆ զրպարտուեցաւ չար մարդիկներից. նրան դատեցին, և երբ նա մեռաւ, պապը հրաման գրեց, որ Հանուին գերեզմանից, այրուին և հողմի տրուին Վիկլեֆ հերետիկոսի ոսկորները։ Սակայն ինչ էր այդ մարդու յանցանքը. եթէ կ'ուզէք իմանալ—կարդացէք նրա գրքերը. այնտեղ կըտեսնէք յանցանքը»։

Պատէրները զայրացան այս խօսքերից և դանգատ գրեցին արքեպիսկոպոսին, թէ Հուս սրբութեան դէմ է քարոզում, պապին հայհոյում է, իսկ Վիկլեֆ հերետիկոսին գովասանում։

Արքեպիսկոպոսն այսպէս հրամայեց. «Ով որ ունի Վիկլեֆի շարադրութիւնները, թող վերցնէ և առաջնորդարանի բակը բերէ. ով որ ընդդիմանայ այս հրամանին— ես նրան կրդատեմ և կրպատժեմ»: Բոլոր պատէրները և դիտնականները տարան Վիկլեֆի գրուածքը արքեպիսկոպոսի մօտ, հուսն էլ տարաւ, ինչ որ ունէր Վիկլեֆի գրուածքներից: Երբոր այս գրքերը մի տեղ դիզուեցան, եկան վառաւոր հանդէսով եպիսկոպոսը և բոլոր քահանաները, զանգերը հնչեցրին «Զքեզ, Տէր, փառաւորեմք» երգեցին և մի խարոյկ վառեցին: 200-ից աւելի գիրք այրուեցաւ: Հազուագիւտ, թանգագին գրքեր էին դրանք. ամեն մի տառը ձեռքով էր գրուած: Գրքերը որ այրուեցան, հուս տուց. «Վա՛տ արին, որ գրքերն այրեցին, գրանց մէջ շատ ճշմարիտ բաներ կային. գրքերն ինչո՞վ են յանցաւոր: Այրելը հեշտ է, բայց դրանով Վիկլեֆի վարդապետութիւնը չի մեռնիլ: Զուր են վշտացնում մեր սիրտը»:

Այսպիսի խօսքերի համար արքեպիսկոպոսը մերժեց հուսին եկեղեցուց: Ժողովուրդը տրտմեցաւ, իսկ գերմանացիք ուրախանալով ստում էին»: Այժմ նրա բերանը կրպապանձուի, էլ չի վրդովիլ ժողովրդի միտքը և քարոզներ չի խօսիլ»:

Հուս գանգատ գրեց պապին եպիսկոպոսի վրայ. իսկ պապը պատասխանեց. «Ի՛մ կամքովս էր որ եպիսկոպոսը քեզ եկեղեցուց մերժեց, և այժմ ես հրամայում եմ քեզ Հռոմ գալ դաղաստանի համար»:

Ճեխացոց թագաւորը խորհուրդ տուաւ հուսին, որ Հռոմ չերթայ. «Այնտեղ քեզ կրդատապարտեն, ասաց նա.—լաւ է՝ մի գնար, մնացիր. ես իմ վրայ կ'առնեմ յանցանքդ»:

ՓԻԼԻՊՊՈՍ ՎԱՐԴԱՆԵԱՆ

(Կըշարունակուի)

ԸՆՏԱՆԵԱԿԱՆ ԶՐՈՅՑՆԵՐ

(Դիսանդէից)

Բ.

առաջ տանելով մեր վորձերը և նկատողութիւնները, մենք գործ էինք դնում ամեն հնարներ և միջոցներ մեր զբաղմունքների դիտողութեան և արդիւնաւէտութեան համար։ Այդպիսով մենք այն մտքին եկանք, որ հարկաւոր էր դանազան ճրճիներին, մողէսներին և այլն, բանտարկել, որ նրանք հեշտութիւնով ենթարկուին մեր դիտողութիւններին. ուստի մենք ձեռնարկեցինք պատրաստել մի փոքրիկ ակվարիում. մեր ակվարիումը բաղկացած էր մի դլանաձև ապակէ անօթից. նրա կէսը լցրինք ջրով. մէջը հաստատեցինք մի փոքրիկ սանդուխք, անօթի բերանին ամրացրինք մի մետաղէ ցանցապատ, որի մէջ դրինք կանաչ տերևաւոր մի ճիւղ. ակվարիումի մէջ գետեղեցինք մենք մի քանի տեսակ գորշ և կանաչ գորտեր, ջրային խլէզներ. ցանցապատի մէջ ձդեցինք ծղրիդներ, այլև դանազան ճանճեր, ճիճուներ, մժեղներ և այլն։ Այդ կերպով մենք կարողանում էինք դիտել և նկարագրել թէ նրանց ձևերը և պատկերը և թէ նրանց ճաշակն ու բնոյթը։

Օրինակ մեծ զուարճութիւն էր պատճառում մեզ, երբ մտիկ էինք անում թէ ինչ ճարպիկութիւնով դորտիկները ցատկելով ակվարիումի փոքրիկ սանդուխքի աստիճանների վրայով, բարձրանում էին և դարանամուտ լինելով որսում էին ճանճերին և կուլ տալիս։

Մի անգամ պատահմամբ, այնպէս, վերաւի խոշորացոյցը և ուղղեցի գնտասեղի վրայ, որը խոշորացոյցի տակ մեծացաւ 500 անգամ. ես մընացի ապշած թէ ինչ աստիճանի տգեղ և անճոռնի բան էր երևում իմ աչքին. յառաջ տանելով այդ օրինակի իմ փորձերը, ես խոշորացոյցով նայեցի մի գնտասեղի, մի սլողպատէ հասարակ ասեղի, և մի վարդի փշի ու մժեղի մի խայթոցի վրայ։ Դրանով ես համոզուեցայ, թէ դեռ ինչ աստիճանի անկատար են մարդկային ձեռագործները համեմատած բընութեան արտադրութիւնների հետ, որոնք փայլում

են իրանց կատարելութիւնով և գեղեցկութիւնով։ Ահա, դուք ինքներդ տեսէք այդ բանի ապացոյցը պատկերի վրայ, թէ ինչպէս էին երևում խոշորացոյցով յիշեալ չորս առարկաները, երկուսը ձեռաշէն՝ 1՝ գնտասեղ և 2՝ պողպատէ հասարակ ասեղ, երկուսը բնական՝ 3՝ վարդի փուշը և 4՝ խայթոցը։ Խիստ հետաքրքրաշարժ էին նոյնպէս մեր դիտողութիւնները ջրածին ամենամանր, սկզբնական և միկրոսկոպիկա-կան կենդանիների վրայ։



Մենք դրանց համար էլ վերառինք մի ուրիշ պստիկ ապակէ ակվարիում, որի մէջ ձգեցինք մի քիչ տիղմ, մի տերևալից ճիւղ և լցրինք անօթը ջրով. բերանը ծածկելով դրինք արևի տակ։ Երկու օրից յետոյ այդ ակվարիումի ջրի մէկ-մի կաթիլը խոշորացոյցի տակ միմի փոքրիկ կենդանական ամբողջ աշխարհ էր ներկայացնում, ուր կարելի էր նկատել մինչև անգամ մանր ջրածինների բազմանալը, կերպարանափոխուիլը, նրանց շարժմունքը, ձևերը և այլն և այլն։ Տեղ չկայ այդ ամենը մէկ-մէկ գրով պատմելու. խելօք է նա, ով կրնգտի ինքն անել այդ փորձերը և դիտել այդ ամենը, որ նշանակում է բնութեան հետ խօսիլ, որ բացում է մեր մտքի աչքերը, և

փրկում է մեզ հոգևոր կուրությունից, որ չթարթափինք խաւարի մէջ, այլ լինինք լուսաւոր և աչքաբաց, ուրախ և ազատ։

Ճանապարհորդելով, կամ հէնց այնպէս միայն ըզբօսնելով՝ կարելի է շատ բան սովորել. մաքուր օդի մէջ արած այդ օրինակ հետազօտութիւնները վեհութիւն են ազդում մարդուս ոգուն, ազնուացնում են նրա հոգին, և ամրապնդում են մարմինը։ Առհասարակ բնութեան մօտենալը մեզ կենդանացնում է և եթէ կարելի լինի այսպէս ասել մեզ կոկում է և խտակացնում։ Բնութեան գիրքը բաց է միշտ ամենի համար և երկրիս երեսին ամեն ինչ պատրաստ է իր ծառայութիւնը մատուցանելու հարցասէր և դիտել սիրող անձին։ Ով որ պարապում է բնագիտութիւնով, քաջ գիտէ թէ որ աստիճանի օգտակար է տեսական կամ բանաւոր իմացածը վերաստուգել փորձերով. այդ մասին միշտ յորդորել ենք երիտասարդներին և պատանիներին, որոնք սիրել էին բնութեան ուսումնասիրութիւնով պարապել։

ԽԱՉԻԿ

ՏԵՂԱԳՐԱԿԱՆ ՆԱՄԱԿԱՆԻ

Է.

ՄՆԱՑՈՐԴՆԵՐ

Նացորդները են այժմու Հայերը՝ մի արդէն վաղուց քայքայուած ամբողջութիւնից. հիմա կան միայն նրա մասունքները, նշխարները։ Եւ ոչ չէ ցրուել նրանց կատաղի՝ անագորոյն մրրիկը։

Սևանայ շուրջը — Գեղարքունիքում, այսինքն Նոր-Բայազէդի գաւառում, սփռուած Հայազգի մնացորդները՝ բազմաթիւ մեծ-մեծ Հայկական գիւղերի մէջ, որոնցից մէկը՝ Նոր-Բայազէդը, որին տեղացիները յորջորջում են Գաւառ, 25 տարուց ի վեր վերակոչուած է քաղաք՝ իր 1500 տուն բացառապէս Հայ բնակիչներով,— գտնվում են վերին աստիճանի անմխիթար դրութեան մէջ մաւոր կողմից. որովհետև այդ մի քանի բիւր Հայերը ունին միայն մի դպրոց Նոր-Բայազէդում 100 աշակերտներով. այդ կենտրոնավայրում չի նստում գոնէ մի լուսաւոր վարդապետ որ շրջէր և իր քարոզութիւնով այդ տեղի խստաս խաւար ժողովրդին հասկացնէր ուսման կարևորութիւնը։ Եւ այդ մոռացուած բազմահայ, ամենատգէտ գաւառը էջմիածնի թեմումն է։

Նոր-Բայազէդը գտնվում է Սևանայ արևմտակողմը ծովեզրից 6 վերստ հեռու մի նեղ հովտիկում Գաւառ անունով գետի ափին. տները կաւաշէն են խառն հրաբղխային կարմիր ու սև քարերով, տափակ կտուրներով. կան շատ երկյարկանի վայելչակերտ տներ. երկու Հայոց եկեղեցի, մէկը հին, տէև և կաւաշէն, միւսը նոր, քարաշէն. մի հասարակաց շտեմարան, մի նորատունկ պարտէզ. կառավարչական արտաքին դպրոց 60 աշակերտներով. եկեղեցական երկսեռ Հայոց դպրոցներ 120 տղայ, աղջիկ. մի փոքրիկ գրատուն ընթերցարանով։ Գետի վրայ կառուցուած է մի նոր

գեղեցիկ մեծ կամուրջ և մի մեծ օրինակելի ջրաղաց, ուր բանում են մի քանի երկանաքարեր միաժամանակ։ Քաղաքի օդը բարձր լեռնային առողջարար է, իսկ ջրերը «անմահական»։ Քաղաքի շուրջը կան շատ հնութիւններ, աւերակներ, այդտեղ մի բարձր դիրք ունեցող տեղ, փոքրիկ սարահարթ՝ կոչվում է «Խաչերի դաշտ», վասն զի լիքն է վիմարձան կանգուն խաչքարերով. դրա մօտ կան պատուական աղբիւրներ, բանջարանոցներ, հովանաւորուած բարդի և ուռի ծառերով. «Խաչերի դաշտն» է ժողովրդի առաջին զբօսատեղին։

Քաղաքի չորս կողմը և շատ տների բակերում գտնվում են կալեր, մարագներ. կանգնած են խոտի, կտաւատի և հացաբոյսերի դէզեր. ամեն գաւթում կան կուլ ահագին կանոնաւոր դարսած կոյտեր, որոնց տեղացիները անուանում են ամրոց, իսկ կուլին՝ ցան. պատրաստած, կոտրտած ու դիզած կուլի կոտրները ասվում է փթիր, իսկ այնպէս ընկած չորացած կուլի կոտրները ասվում է դարթ. այս կողմերում առհասարակ կերակուրը եփում են և հացը թխում ցանով վառած թոնիրներում. գործ են ածվում կաւից շինած կաթսաները, որոնք կոչվում են պտուկ, աւելի խոշորները՝ կճուճ. հայերի գործածած խնոցիներն էլ մեծ մասամբ կաւից են, սակաւ փայտի. Թուրքերը բացառապէս փայտի խնոցիներ են բանեցնում, իսկ քրդերը գլխաւորապէս՝ կաշուից շինած տիկաձև խնոցիներ։ Քաղաքի՝ ի բաց առած ունևորների յարմարաւոր տները՝ թէ արտաքին կերպարանքով և թէ ներքին կենցաղավարութիւնով նման է շրջակայ հայ գիւղերին. իսկ հայկական գիւղերը զանազանվում են Թուրքերի գիւղերից նրանով, որ աւելի լաւ տներ ունին և գիւղերին կից կան բանջարանոցներ և ծառեր։ Այդ բանջարանոցներում հայերը ցանում են տնային պիտոյքի համար բողկ, բազուկ, գետնախնձոր, կաղամբ, մի քանի այլ կանաչիներ և կանեփ. կանեփի սերմերից (հատիկներից) հանում են ձէթ, իսկ ծղօտից՝ հիւսում են թոկեր։ Բանջարանոցներին կից կան փոքրիկ ծառաստաններ, բաղկացած գլխաւորապէս ուռենիներից։ Ատաղձի փայտ բերում են այս կողմերը Դիլիջանի և Արցախի Խօթայ Վանքի կամ Տաք-Ջուրի անտառներից։ Նոր-Բայազէտը կապվում է 30 վերստ հասարակ կառքի ուղիով Երևանից մինչ երկաթուղու Աղստաֆայ կայարանը գնացող

խՃուղի մեծ Ճանապարհի հետ արևելեան կողմից Ելենովկայ ռուս աւանի փոստային իջևանում։

Գեղարքունիքի հայերի լեզուն մաքուր է՝ նման Արարատեան բարբառին, այլ և ունի իր մէջ յոգնաթիւ շատ հին բառեր և ոՃեր, որոնց մենք կարծում ենք այժմ իբր թէ միայն գրաբառում կարելի է գտած ածել. օրինակ՝ զէնել, բարելից, մսուր, նախորդ, յուշիկ, նախիր, դար, արօտ, կոն, ծաղրերես և այլն և այլն. էգ ոչխարին ասում են՝ ստերմ. ստերՃը երբ առաջին անգամ ծնում է գառը՝ կոչվում է մաքի. արու, երկու տարեկան ոչխարին ասում են կաւր կամ շիշակ. կրտսած ոչխարին ասում են հօգամ. հորթը երկու տարեկան լինելուց յետոյ կոչվում է երինջ, եթէ էգ է, իսկ եթէ արու է՝ արջառ և այլն և այլն։

Այդ լեռներում մանգալիս՝ ես խնդրում էի, անթիւ ծաղիկները և խոտերը ցոյց տալով, որ նրանց անունները ինձ ասէին. ահա ՃեռատեսերիցՍ առաջ եմ բերում մի քանիսը տեղացիների ասած բոյսերի անունները։ Երեքուկ, վայրի կտաւատ, աղբրան-արիւն. որՃ-խոտ, ցորնուկ-խոտ, սեռիկ (խոտ է), կապոյտ ծաղիկ, կակաՃ, հազար-դարուն, գազ, սղոցիկ, ուրՃ, վայրի սոխ, ալի, գելաբոխ, օշինդը, կապտախոտ, Ճաւիկ, պեժանիկ, սաւդուկ, շերեփուկ, եզան լեզու, ողորմակոթ, թուի-խոտ, կոնՃ-օՃ, թորթոռիկ, ասստղ-փուշ, գեղաւեր-փուշ, եղինջ, եղջերիկ, սուտ-համեմ, ցնկան ծաղիկ, լողակի ծաղիկ, մոգ ծաղիկ, սանդալ, մանդակ, վարդէնիս, աղշպանք, շաղկմուկ, կաթնով փուշ, կաշ, սիբեխ, ՃնՃղապաշար, հացուպանիր, տէրոզորմիկ, և այլն և այլն։

Նոր-Բայազէտը մի բացառութիւն է կազմում մեր երկրում. այդ քաղաքն ունի 12,000 օրավար քաղաքապատկան վարելահող, որ մշակում են նոյն իսկ քաղաքացիները. քաղաքում հաշվում է աւելի քան 15,000 գլուխ խոշոր անասուն, բացի ոչխարի հօտերը. քաղաքում կան այնպիսի հայեր, որոնք ունեն 500—600 միայն կթի ոչխար, բացի գառները, շիշակները և այլն. տուն չկայ, որ չունենայ գոնէ 20—40 կթի ոչխար, մի քանի կով, մի երկու զոյգ բանուոր եզ, գոմէշ և այլն։

Քաղաքը ունի նմանապէս երեք ահագին արօտատեղի սարերում ամառուայ համար, որոնցից մինը քաղաքային է, իսկ երկուսը կապալով վերցրած. այս ամառ հասարակաց

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎԵԱՆ

«ԱՂԲԻՒՐԻ» ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԱԼԲՕՄ

արօտում բացի միւս մանը ու խոշոր կենդանիներից՝ կային արածող աւելի քան 800 միայն ձիեր, չհաշուած միւս երկու արօտներում և քաղաքում եղածը ու այն հօտերն ու նախիրները, որոնց քաղաքի անասնապահները, տեղ չլինելու պատճառով, ցրւում են ամբողջ գաւառի հայերի մանաւանդ քրդերի արօտներում վարձով արածացնելու համար։ Այլ և ասորիլին շրջակայ գիւղերի բնակիչները գալիս են քաղաքացիների կովերի մի մասը տանում են ամառը պահելու և ամբողջ 5 ամիս պահելուց տալիս են կովատիրոջ 2 լիտր (24 ֆ.) իւղ։

Քաղաքի տները վերջանալուց սկսվում են արտերը— վարելահողերը, որոնք շուրջ տարածվում են մինչև 10—12 վերստ հեռու. արևմտեան կողմից, վարելահողերի գծից յետոյ, սկսվում են լեռնային արօտները, որոնք դարձվեր բարձրանում են դէպի բարձր սարերը։ Հայերի արօտները վերջանալուց աւելի բարձր սկսվում է քրդերի և Թուրքերի արօտատեղը. ամբողջ գաւառում հայերի արօտները կից են իրանց վարելահողերին։

Մայիսին քաղաքացիներն էլ գիւղացիների պէս առած հօտերը և նախիրները սարն են բարձրանում, ի հարկէ ոչ գլխովին, այլ որչափ անձ հարկաւոր է անասունների վրայ հսկելու և կաթից իւղ, պանիր պատրաստելու համար։ Հայերը իրանց բոլոր կեանքը հողագործութեան նուիրած լինելով, իրանց հօտերի պահպանութիւնը բացառապէս յանձնած են քուրդ հովիւներին. այս գաւառում հայ հովիւներ չկան։ Կան ուրիշ պատճառներ էլ՝ որ հայերը քուրդ հովիւներ են պահում. քրդերը կատարեալ հմուտ են խաշնարածութեան. չարքաշ են վերջին աստիճանի. սրտոտ են և քաջ հօտը պաշտպանելու գազանների և աւազակների դէմ։ Քուրդ հովիւը իր ընտանիքի հետ միասին ստանում է հայերից ապրուստ. 20 ոչխարից մի ոչխար. մի թաղիք վերարկուի համար. բաւական բաժին խուզած բրդից. մի-երկու լիտր իւղ պանիր, տարեկաներ մի քանի զոյգ, շապկացու. իր ունեցած անասուններն էլ անվարձ արածացնում է հայերի արօտներում. Թուրքերը և քրդերը իրանց հովիւներին դրա քառորդը հազիւ են տալիս։ Հայերից լինում են միայն նախորդներ, գառնարածներ և այլն։

Հողագործութեան բերքն է այս գաւառում ցորեն և

գարի, կտաւատ և ձաւար. ցորենի առատութեան կողմից Անդրկովկասի մի նշանաւոր շտեմարանն է համարվում Գեղարքունիքը. ցորենը կազմում է նրա արտաքին առևտրի մի գլխաւոր ճիւղը. կտաւատից պատրաստում են ձէթ, ուտելու և գիւղերում ճրագալուսի համար, ուր տակաւին նաւթի գործածութիւնը չի մտել, նոյնպէս և արտահանելու համար։ Ձաւարը ցանվում է գլխաւորապէս տնային պաշարեղէնի համար. ձաւարը ցորենի մի տեսակն է. ցորենի նման, կարմրագակ, բարակ և երկար, վտիտ ձևով. համով շատ անուշ է, նրանից ուտիսուայ և պասուայ քաշովի ու փլաւ են եփում և համարեա բրինձի տեղ է բռնում այդ կողմերում։ *)

Սևանայ լճի ձկնորսութիւնը և նրա առևտուրը բացառապէս Նոր-Բայազէդցիների և շրջակայ հայ գիւղերի ձեռին է, նոյնպէս և լճի վրայ լաստապանութիւնը. թուրք գիւղացիները թէ առաջինով և թէ երկրորդով չեն պարապում և ձուկ սակաւ են ուտում. հայերը բացի բաւականաչափ դրամական շահը որ ստանում են ձկնավաճառութիւնից, նոյնպէս վերջին աստիճանի ձկնակերը են. բոլոր տարին թարմ և աղած ձուկը անպակաս է նրանց տանից, թէ նախաճաշիկին, և թէ ճաշին և ընթրիքին։

Կանոնաւոր ձկնորսութիւնը սկսվում է սեպտեմբերի 15-ից և տևում է մինչև գարունքի վերջը։ Բռնուող ձկներն են՝ իշխան, գեղարքունի, կարմրախայտ, կողակ, բախտակ, բեղաւոր և այլն։ Բացի լճից ձկնորսութիւնը լինում է և գետարբերաններում մեծ յաջողութիւնով. այս վերջիններում գետը բաժանելով առուների, կապում են ջրի բերանը քարով և տիղմով, ապա քիչ ժամանակից գետի ընթացքը շրջելով, նրա սակաւաջուր հուներից ոչ թէ օրսում են, այլ ուղղակի գրկալից հաւաքում են ձուկը և լցնում կողովները։

Վերը յիշած մի քանի ակնարկներից դժուար չէ հետևցնել որ Նոր-Բայազէդը անասնավաճառութեան, ոչխարի, ցորենի և ձուկի վաճառականութեան կեդրոն է, և թէ այդ բերքերով ամբողջ գաւառը թաթաղուն-զեղուն բարելից է. ուրեմն կարելի էր ենթադրել որ վայելուչ կեանք և մտա-

*) Ուրիշ տեղերում այդ ձաւարին ասում են «ճաճար», իսկ՝ ձաւարը՝ ասում են ցորենից կամ ճաճրից աղացած կորկոտին.

Ծ. Խ.

ւոր ու տնտեսական յառաջադիմութիւն պիտի ունենար այդ տեղի ժողովուրդը. սակայն ընդհակառակն այստեղ ժողովուրդը անշարժ մի կէտի վրայ կանգնած է. ոչինչ մտածութիւն և հոգս երանց գիւղատնտեսութիւնը զարգացնելու կամ հոգևոր և մտաւոր կատարելութեան. անբան կեանք, մինչև անգամ բարոյասէր էլ վիշացած, անընկճելի տգիտութիւն և խաւար՝ թագաւորում են ամբողջ գաւառում:

Նոր-Բայազէդի գաւառի նշանաւոր մեծ հայ գիւղերն են, որոնց արդէն մի անգամ յիշեցինք. Ծաղկունք, Ցամաքաբերդ, Օրդակլու, Փաշաքենդ—քաղաքին մօտ՝ նշանաւոր հնադարեան եկեղեցիով անսիւն և թագաձև գմբէթով. Բաշ-քենդ—կէսը հայ, կէսը թուրք, մօտը մի սարի վրայ կանգուն մնացած վանքեր. Հաթամ Խան—հնութիւններ, բևեռագիր արձանագրեր. Զորատեղ—մի գեղեցիկ ձորում, երեք հին եկեղեցիների սրատաճիլիկ աւերակներով. Թաղաքենդ—հարուստ մեծ գիւղ—մօտը մի կանգուն հին եկեղեցի գեղեցկաշէն. Գեոլ—Ծովատիեայ գեղեցիկ գիրքով. Աղիման վերին և Աղիման ներքին—ուր կան շատ խաչքարերի հնութիւններ և մի վերխարի բազմասրահ փառահեղ աւերակ եկեղեցի. Զօրս-խաչ, Ղարանլուխ վերին և ներքին, Գեոզալդարա, Արուչալու, Ալիղուխ—մեծ հայ գիւղեր. Կոխբուլախ—պատուական առատահոս աղբիւրներով. Նորադուղ—շատ հնութիւններ. Զաղալու—Ծովատինեայ, լաւ եշխան սրսալու տեղ. Բասար-քեչար—մեծ կեդրոնական գիւղ՝ շուկայով և այլն։

Ն. ՏԷՐ-ԱՒԵՏԻՔԵԱՆ

ՀԵՏԱՔՐՔԻՐ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Երկաթուղիական հանդէս Փարիզում։—Այս տարի լրանում է Ֆրանսիայում երկաթուղիներ շինուելու յիսնամեակը. այդ առիթով միջազգային հանդէս պիտի լինի Փարիզում, որ կրբացուի մայիսի մէկին. դրա համար կառուցանվում է այժմ մի ապարանք, որ պիտի 12,600 մետր տարածութիւն բռնէ. այդ պալատը ամբողջ պիտի կառուցանուի երկաթից եւ ապակուց։

—

Մարդու կեանքի արժէքը։—Ամերիկայում մի ժլատ հաշիւ է արել, թէ ինչ է նստել իր կեանքը ութսուն տարուայ ընթացքում։ Նա հաշուել է որ կերակուր է դործ ածել 82,125 անդամ, ճաշ է արել 61-595 անդամ. խմել է 51,000 բաժակ թէյ. 18,000 բաժակ սուրջ. շորի համար ծախսել է 1420 դոլար, եւ այլն, ընդ ամենը ժլատի կեանքը նստել է իր վրայ 8000 դոլար։ Մի թղթակից ամերիկացի՝ հաղորդելով այդ լուրը, ասում է. զարմանալի է, որ ժլատի մըտքին չի եկել իր երկար կեանքի ընթացքում, որ շուտով վերջ տար իր կեանքին խնայողութեան համար եւ այդքան ծախսերի տակ չընկնէր։

—

Թուղթ, որ փոխարինում է քարետախտակ։ — Արդէն Շվէյցարիայում հնարել են այնպիսի թուղթ, որի վրայ դրածը կարելի է ջնջել թաց սպունկով։ Դրա համար որ եւ է դոյնի թուղթ ծածկվում է «նոսր ապակի» անունով հեղանիւթով, յետոյ լաւ չորացնելով, այդ օրինակ թղթի վրայ կարելի է դրել մատիտով, կաւիճով, ածուխով, դրիչով, եւ շատ անդամ ջնջելով՝ ամենեւին թուղթը չի վնասվում։

—

Մի փունջ թաքմ ծաղիկներ։—Այդ փունջը ստացաւ կոմսուհի Ա. Ս.-Պետերբուրգում Բիոժանէյրօից։ Այդ փունջը պինդ ամրացրած է եղել ցինկի արկղում՝ պատած խեժով. ուստի չնայած որ փունջը 28 օր ճանապարհ էր եկել, այնու ամենայնիւ նա ժամանել էր մայրաքաղաք թարմ եւ բուրալից։

—

Ամենափոքրիկ լրագիրը։ Մեքսիկայում լոյս է տեսնում ամեն օր մի լրագիր որ ամենափոքրիկն է իր տեսակի մէջ աշխարհիս երեսին։ Այդ լրագրի խորագիրն է „Հեռագիրը». երկարութիւնն է 3 վերշոկ, լայնութիւնը 2 վերշոկ, բաղկացած 4 երեսից. իւրաքանչիւր համարի դինն է $1^1/_2$ կոպէկ. իւր նշանաբանն է հետեւեալը. քիչ դարմանն (յարդ), բայց շատ ցորեն։—

—

Աշխատաւորը կենելն թիւը Ամերիկայում։ — Նիւ-եորկում հրատարակուող տեղեկացոյցի ասելով՝ դրանց թիւը 3 միլիոնից անց է, որոնցից 690,000-ը վարժուհի է։

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ՉԻՆԱՑԻՆԵՐԻ ՄԷՋ

Յայտնի է, որ չինական ուսումնականները հրաչակաւոր են իրանց երկարատև նստուկ պարապմունքով։ Այսպիսիներից ամենից նշանաւորն է այժմ երկու — Կուանգոյի փոխարքայ Զանգը. նա այն աստիճան սիրում է իր ուսումնական զբաղմունքները, որ նրան ենթադրեալ մեծաւորները այսպիսի մի դանդաղ արին աշխարհի պետին. «Տէր կայսր, քո փոխարքայն Զանգը շարունակ ընկղմուած է մատենագիտութեան անհուն ծովի մէջ. երբէք նա չի երևում ժողովրդի աչքի առաջ. բոլոր գործերը յանձնել է մեզ՝ մանդարիններիս. նա նշանակում է որոշ ժամեր, երբ կարող էինք իրան հետ տեսակցիլ և խօսել նոյնքին գործերի կառավարութեան մասին, բայց երբէք չի կարողանում իր խոստումը կատարել և մենք հնար չունինք նրան տեսնելու և խորհրդակցելու նոյնքին վարչութեան մասին։ Վերջին ժամանակներս Սև դրօշակների զօրավարը նշանակած ժամանակից վեց ժամ աւել սպասեց նրա դռների առաջ, սակայն իզուր, նա ընդունելութեան չարժանացաւ. նա ստիպուեցաւ հրամայելու, որ դռները ջախջախեն. ներս մտաւ տեսաւ, որ փոխարքան մի արաբական մատեանի ընթերցումի մէջ խորասուզուած է, հարկ եղաւ մի մերկացրած սուր պարզել նրա պարանոցին, որից յետոյ հազիւ նա ուշքի եկաւ և ընհատել կարողացաւ իր պարապմունքը»։ Զնայելով այդ ամենին, Զանգ փոխարքան խոստովանում է որ ինքը տակաւին մինչև ցարդ չի իմանում չինական այբուբենը ամբողջապէս։ Որքան բազմաթիւ և բազմազան են նրանց նշանագրերը . . .

ՀԱՆԵԼՈՒԿ

Առաջ. Յով. Պալումեանց.

(2) Մի քաղաք եմ Հայաստանում,
Եւ բազմավանկ չէ իմ անուն.
Ձախից դէպ աջ, աջից դէպ ձախ
Թէ կարդաք, նոյն է իմ անուն։

ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆ

Ամենից վսեմ ո՞ր յատկութիւնն է,
Որ անունն ազգի կըբարձրացնէ.
Մարդ ինչ յատկութիւն պիտի ունենայ,
Որ ոչ մէկի մօտ նա չըտրտրանայ.
Ո՞ր յատկութիւնն է, որ երբ մարդ չունի,
Ինչ որ ունենայ, ձեռքից կրխլուի.
Ո՞ր յատկութիւնն է, որ տղամարդին
Դատում է նոսինի դիւցազանց կարգին...
Հապա՛, ձեզ տեսնեմ, մէկ լաւ փնտրեցէք,
Դուցէ այդ բանից մեր մէջը գտնէք...
Առածրս փող չէ, ոչ խելք, ոչ ուսում,
Այդ բանը չկայ ոչ մի հրէյում.
Սրա գտնողին, ինչ ասել կուզի,
Որ խմբագիրը մի գիրք կընծայի։ *)

ՀԱԲԱՇ

---

*) Առաջարկութիւնս լուծողը կըստանայ մի գիրք մեր հրատարակութիւններից, կամ եւրոպական և՛ ասիական փոստերի նամականիշների (մարկաների) մի հարուստ ժողովածու

Ծ. Խ.

ՉՈՒՏԱՍԵԼՈՒԿ

Ջորին ճորում ջուլը ծուռ
Ցիտը ջրումը ճիտը ծուռ։

ՊԱՏԿԵՐ Բ. *)



Ահա թէ ձեռքերով ճրագի լոյսի տակ ինչեր կարելի է պատկերացնել պատի վրայ։

*) Տես 1886 թ. № 10-ում։

ՊԱՏԱՍԽԱՆ

«Առաջարկութեան» №-ի *)

Ով շատ է դժդոհ իրա վիճակից,
Նա է խռովում բնութեան կարգից։
Եթէ ունենայ լաւ ուտել, հագնել,
Գործով աշխատէ ուզածին հասնել,
Էլ ոչ մի բոլէ իր խելքն ու միտքը
Դժուար հարցերով չի ծանրաբեռնել։
Բայց եթէ մէկը մտքով հիւանդ է,
Կամ իրա չափը դեռ լաւ չդիտէ,
Էլ ես գործ չունիմ այդպէս մարդու հետ,
Նա թող նոր-դարդի բժշկին դիմէ...
Իսկ կազմած գիրքը, որ ինձ պիտի տաք,
Խնդրեմ յանձն առնէք, եթէ կամենաք,
Այդ գիրքն ուղարկել՝ ազգասիրաբար՝
Պարոն Զահարին՝ իբրև մրցանակ...

Ղ*

Նախընթաց №-ի մէջ եղած հանելուկի և բերուսի բացատրութիւնը։ Բերուսի բացատրութիւնը. Ծուլութիւնն է մեծ յանցանք. Վահան, կարդալու ժամանակ է։

		Շ		
	Հ	ու	ն	
Շ	ու	հ	ա	ն
	ն	ա	ւ	
		ն		

*) Այս առաջարկութիւնն անող պարոնի անունը սխալմամբ բաց է մնացել, որ պէտք է լինէր Հաբաշ։

Ս. Խ,

Խմբագիր-Հրատարակիչ՝ ՏԻԳՐԱՆ ՆԱԶԱՐԵԱՆՑ